

ՍՈՒ ԲԵՆՈՒԻ ԿԵՊԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ
ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սոլ Բելլուի ստեղծագործություններն իրենց ուրույն տեղն ունեն ժամանակակից ամերիկյան գրականության մեջ: Շվեդական ակադեմիայի ներկայացուցիչ Կարլ Ռազմալ Գիրովը համծնելով հեղինակին Նոբելյան մրցանակը, նշել է. «Բելլուն անցել է երկար ուղի՝ կենցաղային արկածային վեպից մինչև հակահերոսական, որի արդյունքում ստացվել է մի նոր տեսակի վեպ, որտեղ միախառնված են մշակույթի նուրբ վերլուծությունը, սուր սյուժեն, որն ի գործու է մխրճվել արտաքին և ներքին բախումների էության մեջ ընթերցողի հետ փիլիսոփայական երկխոսության համակցմամբ: Եվ այդ ամենը գրված է փայլուն լեզվով: Տեղական երանգավորմանն ու փաստագրությանը մեծ տեղ տալով Բելլուն ազատություն է տալիս մարդուն և դրանով իսկ նրա վրա մեծ պատասխանատվություն դնում, ցանկություն ներշնչում դեպի ապագա գործերը և հավատը գալիքի նկատմամբ»¹:

Սոլ Բելլուի ստեղծագործությունները մեծ հետաքրքրություն են ներկայացնում հետազոտողների համար, քանզի թե գրականագիտական և թե լեզվաբանական տեսանկյունից հեղինակի ոճական, գեղարվեստական առանձնահատկությունները ներկայացնում են նոր գաղափարների անսահման աղբյուր:

Նրա վիպական աշխարհի յուրահատկությունները պայմանավորված են նախ և առաջ հեղինակի աշխարհընկալման առանձնահատկություններով, մասնավորապես լեզվական և ազգային ինքնության առանձնահատկություններով, քանզի Բելլուն, ստեղծագործելով անգլերենով և ապրելով Միացյալ Նահանգներում, կարողացել է պահպանել իր ազգային ինքնությունը՝ փորձելով նաև ներկայացնել իրեն ժողովրդի մտածելակերպը, ազգային սովորութիները և կերպարները:

Ուսական գրականագիտության մեջ Սոլ Բելլուի գեղարվեստական ժառանգությանն են անդրադարձնում Ն.Լ. Իտկինան իր «XIX-XX դարերի ամերիկյան գրականության բարոյագիտական հիմնախնդիրները» ձեռնարկում և «Սոլ Բելլուի վեպը» մենագրության մեջ, որտեղ հատուկ վերլուծության է ենթարկում Բելլուի բարոյագիտական հայացքները (Н.Л. Иткина, М.: РГГУ, 2009): Ուս

¹ Համազանցային կայք՝ <http://n-l.ru/nl/bellow.htm> Библиотека Мошкова: Беллоу (Bellow), Сол

գրականագետները ուշադրություն են դարձնում հատկապես ռուս հեղինակներ Լ. Տոլստոյի և Մ. Դոստոևսկու ազդեցությանը Բելլոուի ստեղծագործություններին վրա, ինչպես նաև վերլուծում նրա վեպերի առանձնահատկությունները (Яшенкина Р. Ф., Вып.6, Пермь 2009), արծարծվող արդիական թեմաները (*Бронич М.К., Нижний Новгород, 2010.*), կամ հետազոտում առանձին վեպեր (Шоболова С.В., Вестник Нижегородского университета им. Н.И.Лобачевского, 2010, № 1):

Ամերիկյան գրականագիտության մեջ Սոլ Բելլոուի ստեղծագործություններին են անդրադարձել Դ.Լ.Ջ. Բրաունները «Ես-ի մեկնաբանում. Սոլ Բելլոուի, Ֆիլիփ Ռոսի և Ջոզեֆ Դեյլերի ստեղծագործությունների համատեքստային ուսումնասիրություն» (D.L.G. Brauner), Ս.Ջ. Բալլոքը «Ես-ը և աշխարհը. Սոլ Բելլոուի վեպերի ձևը և թեման» (C.J. Bullock), Չեն Տուն-Յունգը «Սարդը քաղաքում. Սոլ Բելլոուի քաղաքային վեպերի ուսումնասիրություն» (Chen T-J), Ջ.Ջ. Բլեյթոնը «Ի պաշտպանություն մարդկային արժանապատվության» (Clayton J. J.), Ս.Բ. Բոհենը «Ձավեշտական տարրերը Սոլ Բելլոուի վեպերում» (S.B. Cohen) դոկտորական ատենիսություններում, որտեղ նշված հեղինակները քննարկում են Բելլոուի ոճը և ստեղծագործությունները:

Դ. Նորդֆորսը «Ամձրևի արքա, Դենդերսոնը. Սոլ Բելլոուի աֆրիկյան վեպն ուրախություն է, որը պետք է զգալ» հոդվածում նշում է Բելլոուի ոճի հիմնական առանձնահատկությունը. նա չի պարտադրում ընթերցողին կարդալ իր ստեղծագործությունները, այլ մատուցում է դրանք որպես նվեր²:

Հայ գրականագիտության մեջ Սոլ Բելլոուի ստեղծագործություններին դեռևս անդրադարձ չի կատարվել, սակայն ընդհանուր գծերով Բելլոուի վեպերում հնչած գաղափարներն արդիական են ոչ միայն առհասարակ ժամանակակից ընթերցողի, այլև հայ ընթերցողի համար, քանի որ տարագրի բախտն ու ճակատագիրը հուզում է յուրաքանչյուր հայի արդեն դարեր շարունակ, և թեմատիկ առումով այն շատ գծերով նման է ժամանակակից հայ գրականությանը: Բացի այդ, նմանություն կա Սոլ Բելլոուի՝ հրեական ծագումով տարեգրի և ամերիկյան հայ տարեգրական գրականության ներկայացուցիչների ստեղծագործությունների միջև (Վ.Սարոյան, Լ.Սուրմելյան, Ս.Առլեն, Փ.Բալաքյան, Դ.Խերդյան, Փ.Սուրյան):

Սույն հոդվածի հիմնական նպատակն է քացահայտել ամերիկյան գրող Սոլ Բելլոուի վիպական աշխարհի առանձնահատկությունները, այն հիմնական թեմաները, որոնք գերիշխող են հեղինակի գեղարվեստական ստեղծագոր-

² Nordfors D. Dancing To Henderson the Rain King. Saul Bellow's Novel of Africa is Still a Joy to Behold <http://www.suite101.com/content/dancing-to-henderson-the-rain-king-a123921#ixzz17oAIDbxy>

ծություններում և որոնց միջոցով ներկայացվում են նրա աշխարհայացքային յուրահատկություններն ու ստեղծագործական զարգացման գործընթացը:

Շարունակելով այլ ամերիկացի դասական գրողների ավանդույթները՝ Բելլուն «գիտակցության հոսք»ի միջոցով ներկայացնում է իր հերոսներին, նրանց ներքին աշխարհում տեղի ունեցող պայքարը բացասական երևույթների դեմ, որոնց լեզվով խոսում է հենց հեղինակը, իր «մարդու, կյանքի մասին գիտելիքը» ներկայացնելով, որոնց միջոցով իր ստեղծագործությունները նմանվում են Զենրի Ջեյմսի, Ուոլթ Ուիթմենի, Նաբոկովի և Ղոստոնսկու ստեղծագործություններին: Սակայն բացի այս հեղինակների հետ կապող վեպերի հոգեբանական արժեքներից, Սոլ Բելլուի ստեղծագործությունները տարբերվում են ընդգծված մարդակենտրոնությամբ, որ և դարձնում է հեղինակի վիպական աշխարհն մեր օրերի համար արժեքավոր:

Յրեական ինքնության թեման հեղինակի երկերի գաղափարական հենքն է, քանի որ գրողը լինելով ծագումով հրեա, փորձել է իր ստեղծագործություններում ներկայացնել ազգային աշխարհահայացքը, մշակույթը և արժեքները: Զենց ինքը Բելլուն բազմիցս նշել է, որ գտնվել է մեծ ամերիկացի գրող Թեոդոր Դրայզերի ստեղծագործությունների ազդեցության տակ, ով էապես ընդլայնել է իր պատկերացումը կյանքի մասին և հոգեպես օգնել ընկալել կուտակված փորձը³:

Ժամրային առանձնահատկությունների տեսանկյունից դժվար է տարբերություն դնել Բելլուի վեպերի և վիպակների միջև, քանի որ իր վեպերը կարելի է անվանել «երկար», իսկ վիպակները «կարճ» ստեղծագործություններ: Սոլ Բելլուի վեպերը կարելի է բազմագործառության անվանել, քանի որ նրանցում առկա են մի քանի ինքնուրույն սյուժեների զարգացումներ, որոնց «առանձին» լինելը պայմանական է, բայց նրանք միասին կազմում են հեղինակի իրական աշխարհը, որտեղ, ինչպես և իրական կյանքում, զուգահեռ տեղի են ունենում բազմաթիվ իրար հետ կապակցված և ոչ կապակցված իրադարձություններ (Ք.Փ. Яшенкина 2009):

Սոլ Բելլուի նորանուծություններից անհրաժեշտ է առանձնացնել նաև նրա բոլոր ստեղծագործությունների համար էականը՝ սյուժեի և ֆաբուլայի նոր փոխներգործման արդյունքում պատմողական նոր ոճի շնորհիվ պատմողը դառնում է ստեղծագործության գլխավոր հերոս և նրա միջով է անցնում մարդու կյանքի մասին հեղինակի պատկերացումը, որը Բելլուին մոտեցնում է Ու. Ուիթմենին, Ֆ. Ղոստոնսկուն, որոնց վիպական աշխարհը նույնպես կարելի է

³ Спенкерен ван Кэтрин. Краткая история американской литературы
<http://uspoetry.info/books/2/chapter8/>

համարել «մարդակենտրոն»։ Այս հմարի շնորհիվ հեղինակի և հերոսի համընկնումը մեկ կերպարի մեջ հնարավորություն է տալիս դիտարկել Բելլուի ստեղծագործությունները որպես հազեցած վեպեր։ Այս հմարը կարելի է դիտարկել որպես հեղինակի ժանրային նորարարարություն։ Այդ վեպերից մեկում «Բարեկամները» (1991) վերնագրով, օրինակ գեղարվեստական աշխարհը գերբնականեցված է բազմաթիվ հերոսներով, ասոցիատիվ կերպարներով, սակայն, այնուամենայնիվ, պատմողը և հենց կյանքն են դառնում ստեղծագործության գլխավոր հերոսներ։ Բելլուն ոչ միայն հոյակապ ձևով ներկայացնում է մարդու ներաշխարհը, այլև գնում է ավելի առաջ իր հոգեբանական և ստեղծագործական որոնումների մեջ, և արծարծում է մարդու երկակիության խնդիրը։

Ամհաջողակ դառնալու վախն այդ դարաշրջանի ամերիկյան գրականության թեմաներից ամենակենտրոնականներից մեկն է իր զարգացումը գտած նաև Բելլուի վիպակներում։ 1956 թվականին տպագրած «Բոնիր պահը» ստեղծագործության հիմնական հերոսը չկայացած գործարար Թոմմի Վիլիեմսն է, որը փորձում է ձևացնել, թե իր մոտ ամեն ինչ կարգին է, որպեսզի թաքցնի իր անկարողությունը։ Վեպը սկսվում է հետևյալ հեզմական ակնարկով. «Երբ որ պետք էր թաքցնել սեփական ամհաջողությունները, Թոմմի Վիլիեմսը կարողանում էր դա անել բոլորից լավ. համենայն դեպս ինքն այդպես էր մտածում...»⁴։ Զակասական է, բայց հենց ուժերի նմանատիպ վատնումը նպաստում է իր կործանմանը. Թոմմին այնքան է տարված իր սեփական անկարողության մասին մտքով, որ վերջինս ձեռք է բերում աղետալի չափեր – ինքն ամհաջողություններ է ունենում կանանց հետ, աշխատանքի մեջ, և, վերջապես, արժեթղթերի շուկայում, որտեղ կորցնում է իր ողջ կարողությունը. Վիլիեմսը մարմնավորում է իրենից մի կերպար, որը հրեական բանահյուսության մեջ ունի «շիմել» անվանումը – մարդ, որի հետ միշտ դժբախտություններ են պատահում։ Այս վեպում ներկայացվում է մի վարքագիծ, որը բնորոշ է շատ ամերիկացիների – վախ և տագնապ ամհաջողակ դառնալու հանդեպ, և որին անդրադարձել են այդ ժամանակաշրջանի ամերիկացի այլ գրողներ՝ Թ. Վուլֆը (Դու այլևս տուն չես վերադառնա), Ու. Սարոյանը (Զարրին) և այլք։ Վուլֆի Վեբերը և Սարոյանի Զարրին Ամերիկայի Ղեպրեսիայի դարաշրջանի հերոսներ են, որոնք դժբախտ են, քանի որ այդպես էլ չկարողացան համակերպվել դաժան իրականության հետ։ Չորջ Վեբերը փորձում է հետ բերել անցյալը, այն ժամանակը, երբ ֆաշիզմը դեռ չէր տարածվել Եվրոպայում, սակայն քաջ գիտակցում է, որ դա

⁴ Кэтрин ван Спэнкерен. Краткая история американской литературы
<http://uspoetry.info/books/2/chapter8/>

այլևս անհնար է: Նույն հուսահատության մեջ է Սարոյանի հերոս՝ Զարրին, որը բավականին մեծ ձեռքբերումներից հետո մահանում է ծանր հիվանդությունից:

Օտարման կամ մեկուսացման խնդիրն այս ստեղծագործության գլխավոր թեմաներից է: Բելոուի հերոսը մեկուսացած է մի հասարակարգում, որի միակ Աստվածը փողն է: Հեղինակն ընթերցողի ուշադրությունը հրավիրում է մի հարցի վրա, որը չափազանց արդիական է մեր օրերում. մարդիկ անտարբեր են իրար նկատմամբ, և նրանց միջև չկա իրական հաղորդակցություն: Թոմիի մեկուսացումն ակներև է նույնիսկ, երբ նա լրագիր է գնում Ռուբինից, նրանք շատ մոտ են ձևանում, սակայն խոսում են ձևականորեն միայն եղանակից, Թոմիի զգեստներից և այլն:

«Նրանցից ոչ մեկին կարիք չկա հիշատակել, և նրանք սկսեցին մի փոքր խոսել այն ամենի մասին, ինչ մնացել էր չասված նրանց միջև» (Թարգմանությունը մերն է. — Ն.Ա.):

Թոմիի կենսաբանական հորը, պարոն Ադլերին բացարձակ չի հուզում իր որդու մեմակությունը: Թոմին ֆինանսական դժվարություններ ևս ունի, սակայն դա չի հուզում հորը: Թոմին փողից ավելի շատ, շփման կարիք ունի հարազատ մարդու հետ, սակայն հայրը կտրականապես դեն է որևիցև ավելի մոտիկ հարաբերությամբ:

«Ես չեմ ուզում ինչ-որ մեկին շալակած տանել: Վայր իջեք: Եվ ես քեզ նույն խորհուրդն եմ տալիս. Ուլբի, ոչ մեկին մի դիր գլխիդ» (Թարգմանությունը մերն է. — Ն.Ա.):

Նույն անտարբերությունը Թոմին տեսնում է իր բժիշկ պարոն Թեմքինի մեջ. նա սկզբից մտածում էր, որ Թեմքինն իրեն կհասկանա, կկարեկցի, սակայն գալիս է այն եզրակացության, որ Թեմքինն իրեն պարզապես օգտագործել է.

«Ես սովորական մարդ էի և կարծում էի, որ ես և Թեմքինը իրար շալակ ենք բարձրացել: Մարգրեթից բացի, նա ստիպում էր իրեն նույնպես շալակած տանեն, և նրանք հեծում էին ինձ սմբակներով և ճիրաններով: Ինձ երկու կտոր անում, տրորում, ջարդում ոսկորներս» (Թարգմանությունը մերն է. — Ն.Ա.):

Վեպի հերոսը չի ստանում կարեկցանք ոչ Մարգրեթից՝ իր կնոջից, ոչ պարոն Փըլզից, ոչ էլ ծերուկ Ռեփրփորթից: Հերոսներից յուրաքանչյուրն էլ ավելի է ընդգծում Թոմիի մեկուսացումը և օտարումը: Կինը՝ Մարգրեթը լքել է իրեն, սակայն հրաժարվում է ապուհարգան տալուց, կտրված է իր որդուց, որին անսահման սիրում է: Օտարման խորիորդանիշը վեպում ոռնացող գայլն է, որի ծայրը լսվում է ազնվացեղ պարոն Վիլիելմի պատուհանից: Բելոուն ցույց է տալիս, որ մարդկային դժբախտություններից մեծագույնը ոգու մեկուսացումն է

հասարակությունից: Նա ամբողջովին ընկճված է շրջապատի անտարբերությունից⁵:

Հաջորդ թեման, որը նույնպես կազմում է հեղինակի վիպական աշխարհի կարևորագույն մասը, բնության և քաղաքի փոխհարաբերակցությունն է («Հունբոլտի նվերը» (1975), «Հերցոգ» (1964), «Դեկանի դեկտեմբերը» (1982)): Բելլուի մոտ բնությունն այն բարոյական արժեքների կրողն է, որը հակասում է քաղաքի փչացած բարքերին: Ըստ հեղինակի, բնությունը բացում է մարդու գիտակցությունը արտաքին աշխարհի հանդեպ, որը, օրինակ, «Հերցոգ» վեպի գլխավոր հերոսի նման, ապրում է ինքն իր մեջ պարփակված: Հերցոգը փորձում է փախչել տոթ քաղաքից դեպի իր վայրի այգիով իր կալվածքը: Բելլուն դիտարկում է բնությունը որպես մարդու կյանքի համար զարգացման միակ բարենպաստ միջավայր: Հերցոգը, ինչպես և հեղինակը, գիտակցում են, որ կյանքը իր ցանկացած դրևորումներով – կարգուկանոնի և անկանոնության բարդ փոխներգործություն է, և դրանք երկուսն էլ գոյություն ունեն որպես մեկ միասնության երկու տարբեր ասպեկտներ: Այն միտքը, որ ոգու զարթոնքի համար հնարավոր է միայն մեկ բարենպաստ միջավայր – այն բնական միջավայրը բնությունը, հնչում է հեղինակի գրեթե բոլոր ստեղծագործություններում: Մեկ այլ վեպում՝ «Դեկանի դեկտեմբերը», Սորդեն՝ ստեղծագործության գլխավոր հերոսը, փորձում է պաշտպանել սևամորթ ուսանողի շահերը, որին մեղադրում են երկու սպիտակամորթ տղաների սպանության մեջ: Սորդեն պարտվում է այդ գործի մեջ, և ստիպված է մեկնել, բայց նա մեկնում է ոչ թե եվրոպական հարավային մի այլ երկիր, այլ կնոջ հետ բարձրանում են սարերը, դեպի արևը: Հերոսը չի ընկճվում, այլ ընդհակառակը, բարոյապես այնտեղ առողջանում է և սկսում ճիշտ ընկալել աշխարհը և մեկնաբանել իրականությունը: Բելլուն ցույց է տալիս, որ իր հերոսը բնության գրկում ապաքինվում է՝ հրաժարվելով դիմադրություններից և պայքարներից:

Ոչ պակաս հետաքրքիր է Բելլուի՝ կնոջ կերպարի մեկնաբանությունը: Հիմնականում Բելլուն բնութագրում է կնոջը որպես դեստրուկտիվ, շահամոլ էակ, և ինչպես նշում է Ջոզեֆ Մաքկադեն, Բելլուի հերոսները ասում են իրենց կանանց, քանի որ նրանք անհավասարություն և անիմաստություն են ներշնչում իրենց բնությով⁶:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ժամանակակից աշխարհի զլորթլացման տեսանկյունից Սոլ Բելլուն մարմնավորում է այն միջնորդը, որը կա-

⁵ Theme of Alienation in Saul Bellow's *Seize the Day*
<http://literary-articles.blogspot.com/2010/02/theme-of-alienation-in-saul-bellow.html>

⁶ McCadden, J. F. *The Flight from Women in the Fiction of Saul Bellow* University Press of America, Washington, DC, 1980.

պում է բոլոր մարդկանց իրար հետ իրենց նույնատիպ խնդիրների միջոցով, տեղական թեմաները դարձնում գլոբալ, քանի որ դրանք հուզում են ողջ մարդկությանը, և այդ տեսանկյունից Բելլուն առաջարկում է մարդկության հիմնախնդիրների լուծման իր ճանապարհը, որի էությունը մարդու մտավոր ներաշխարհի ընդլայնումն է, որն ի վերջո հանգեցնում է մարդկային «եւ»-ի հաղթանակին, քանի որ նա գիտակցում է, որ հասարակական խնդիրների լուծումն իր սեփական հաջողության գրավականն է դառնում:

Օգտագործված գրականություն

1. Библиотека Мошкова: Беллоу (Bellow), Сол. <http://n-t.ru/nl/it/bellow.htm>
2. Бронич М.К. Рецензия русской литературы и культуры в творчестве Сола Беллоу. Автореф. дисс., Нижний Новгород, 2010.
3. Иткина Н.Л. Роман Сола Беллоу. М.: РГГУ, 2009.
4. Иткина Н. Л. Эстетические проблемы американской литературы XIX-XX веков, М.: РГГУ, 2002. - с. 21.
5. Кэтрин ван Спэнкерен. Краткая история американской литературы <http://uspoetry.info/books/2/chapter8/>
6. Шоболова С.В. Рецензия романтизма в романе Сола Беллоу "Герцог"/ Вестник Нижегородского университета им. Н.И. Лобачевского, 2010, № 1, с. 309-314 http://www.unn.ru/pages/e-library/vestnik/99999999_West_2010_1/44.pdf
7. Яшенькина Р. Ф. "Длинный рассказ С. Беллоу (особенности жанра и поэтики)"/ Вестник Пермского университета.Российская и зарубежная филология. Вып.6, Пермь 2009 <http://www.rfp.psu.ru/archive/6.2009/jashenkina.pdf>
8. Abramson E. A.The Immigrant Experience in American Literature. http://www.baas.ac.uk/index.php?option=com_content&view=article&id=219%3Aedward-a-abramson-the-immigrant-experience-in-american-literature&catid=18&Itemid=11
9. Brauner D.L.G. Explaining the Self: A Contextual Study of Saul Bellow. Philip Roth and Joseph Heller. Diss. U of London, U College, 1995.Bullock C. J. The Self and the World: A Study of Form and Theme in the Novels of Saul Bellow. Diss. U of Leeds, 1975.
10. Bullock C. J.The Self and the World: A Study of Form and Theme in the Novels of Saul Bellow. Diss. University of Leeds, 1975.
11. Chen Tung-Jung. Man in the City: A Study of Saul Bellow's Urban Novels. Diss. Michigan State U, 1987.
12. Clayton J. J. Saul Bellow: In Defence of Human Dignity. Diss. Indiana U. 1966.
13. Cohen S. B. The Comic Elements in the Novels of Saul Bellow. Diss. Northwestern U, 1969.
14. McCadden, J. F. The Flight from Women in the Fiction of Saul Bellow University Press of America, Washington, DC, 1980.
15. Nordfors D. Dancing To Henderson the Rain King: Saul Bellow's Novel of Africa is Still a Joy to Behold <http://www.suite101.com/content/dancing-to-henderson-the-rain-king-a123921#ixzz17oAJDbxv>
16. Saroyan W. Selected Short Stories. М: Изд-во Радуга, 1989.
17. Theme of Alienation in Saul Bellow' a Seize the Day <http://literary-articles.blogspot.com/2010/02/theme-of-alienation-in-saul-bellowa.html>
18. Wolfe T. You can't go home again. New York, London, Harper & Bros, 1940.
19. Wood J. The high-minded joker. The Guardian. Saturday 9 April 2005: <http://www.guardian.co.uk/books/2005/apr/09/saulbellow>